բայց սակայն այնքան կոյր չեմ, թէ զԱրեաց[1] ոյժ եւ տեսանել անգամ չգիտեմ. որոյ ուժոյ զբազում ազգս ապստամբաց[2] հարեալ է սաստիկ երկիւղիւ, եւ հնազանդեցուցեալ ընդ ձեռամբ իւրեանց ունին: *15* Իսկ ես, որ ապստամբելս կամիմ ըստ դորա ասելոյդ՝ դոյն իսկ ինքն[3] գիտէ, զի մի ծառայ չգտանի իմ, որ ինձ խոհկերութիւն առնէ, եւ ոչ երկուց կամ երից պատանեաց իշխեմ տիրաբար, որ ինձ երկիւղիւ սպաս ունին. գնդի[4] իմ ոյժ այդ է: *16* Բայց եթէ նեղ ինչ էր ինձ ի ձէնջ, եւ ուրեք յաւտար երկիր գնալ եւ կորնչել կամէի, զայդչափ ոսկի այսր զի՞ բերէի, որ մինչեւ ցմահ իմ, թէեւ կարի շատ կէի՝ իմում անձինս, այլ եւ տասանց եւս ընդ իս, թոշակ շատ էր եւ բաւական. եւ զայլ ոք ոստիկան ձեր յիմ վերայ չէր կացուցեալ, որ թէ ինձ[5] ի հարկէ տայր բերել այսր զայդչափ բազմութիւն ոսկւոյ: *17* Բայց թէ վաստակել գիտեմ ձեզ՝ դուք կարող էք որ զիս թէ կամիք կեցուցանել, վաղվաղակի եւ առ ժամայն մեծացուցանել, որպէս եւ կամիք»:

18 Եւ լուեալ զայս թագաւորին Պերոզի եւ այլ աւագանւոյն զայնպիսի իմաստութեան[6] զխաւսս ի Վահանայ՝ ամենեքեան իրաւացուցին զխաւսսն Վահանայ քան զխաւսսն Վրուայ: *19* Եւ ելանէր Վահան արդարացեալ յատենէն, եւ որդի Ասորւոյն Վրիւ ելանէր ամաչեցեալ եւ արհամարհեալ: *20* Եւ հրաժարեալ Վահանայ ի դրանէ՝ մեծարանաւք եւ բազում շքեղութեամբ եկեալ հասանէր յաշխարհս Հայոց:

21 Եւ քանզի ոչ էր խաղաղութիւն մտաց նորա զամենայն աւր վասն վատ անուան ուրացութեանն, զոր նման նահատակեալ հարցն իւրոց պատճառանաւք եւ ոչ ճշմարտութեամբ կրէր յինքեան, եւս առաւել ի գալն պայծառութեամբ ի դրանէ՝ տարակուսէր յանձն իւր, թէ մի՛ գուցէ պատրեալ ի փառս աշխարհիս՝ յամեալ մոռանայցէ զերկիւղ հանդերձելոյ աշխարհին, եւ վնասիցի: *22* Եւ այսպէս ցանկ մաշելով ի միտս իւր՝ ծանուցանէր առ ջերմ սիրողաց զիւրն հոգալ, եւ հնարս հայցէր եւ անդադար խնդրէր ի Փրկչէն Քրիստոսէ՝ շնորհել նմա ժամ բարի, ասելով ընդ միտս իւր, թէ «Միշտ ընդ քեզ[7], տէր Աստուած, ամենայն ինչ հնարաւոր է, եւ տկարանայ քեզ եւ ոչ ինչ. դու, տէր, ապաւէն իմ լեր. շնորհեա՛ ինձ ժամանակ դարձի խոստովանութեան, եւ ուսո՛[8] ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ»:

---

1 *Զ.* զարեաց-*ի փոխարէն նախ՝* զարթեայց, *ապա՝* յ-*ն ջնջած*
2 *Զ.* ապաստամբաց *(երկրորդ* ա-*ի վրայ ջնջման նշանով)*
3 *ՏՏ.* դոյն իսկ ինք
4 *Զ.* գնտի
5 *ԲԳտ.* որ թէ ինչ
6 *Զ.* իմաստաբանութեան զխօսս. *ԲԳտ.* իմաստութեամբ
7 *ԲԳտ. ուղղագրել են* միշտ քեզ
8 *Զ.* ուսոյ